ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԴԼԵՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՂԱՍԱՐԻ

ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆ

ԺԹ.00.04 -«Կլինիկական, հատուկ հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վիլենա Հրանտի Գրիգորյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մելս Պարգևի Մկրտումյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու
Միեր Կարենի Նաղդալյան

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025թ.-ի ապրիլի 25-ին, ժամը 16:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցե՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025թ.-ի մարտի 13-ին:

Հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Դ. Ռ. Հայրապետյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Մարդու ինտելեկտուալ և ստեղծագործական ներուժի նկատմամբ հետաքրքրությունը եղել է պատմական բոլոր ժամանակներում: Տեխնոլոգիական առաջընթացը, կրթական համակարգի և արհեստական բանականության մարտահրավերները խթանել են ընդունակությունների, օժտվածության և տաղանդի բացահայտմանն ու պահպանմանն ուղղված հետազոտությունների իրականացմանը: Այս պահանջարկին զուգահեռ աճում է տեսամեթոդաբանական հարացույցում չհամադրվող ուսումնասիրությունների քանակը, հատկապես օժտված երեխաների և պատանիների հոգեդիագնոստիկայի հարցում, որոնք վերջնարդյունքում հանգեցնում են իրար բացառող, հակասական արդյունքների, դրանց համակարգման և իմաստավորման խնդիրների: Ուստի, առանձնահատուկ կարևորություն է ստանում օժտվածության և նրա կառուցվածքային բաղադրիչների գիտական պարզաբանումը, համակարգային և համապարփակ մոտեցումը:

Հայտնի է, որ արտակարգ ընդունակություններ ունեցող մարդիկ ունեն հոգեկան առողջության խնդիրներ, ինչպիսիք են՝ դեպրեսիա, բիպոլյար, տագնապային խանգարում, ՈՒՊԳԽ, օբսեսիվ-կոմպուլսիվ խանգարում, աուտիզմի սպեկտրի խանգարումներ, ուսումնական դժվարություններ, որոնց ծագման և զարգացման մեխանիզմները շարունակում են մնալ չպարզաբանված [188]: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել հոգեկան առողջությունը պայմանավորող համալիր՝ հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական գործոնները, ըստ օժտվածության մակարդակի և տեսակի, ինչը գիտության մեջ դեռևս ուսումնասիրված չէ:

Օժտված մարդկանց բնութագրող անձնային առանձնահատկությունները հակասական բնույթ են կրում, որոնք բացատրելու նպատակով առանցքային է օժտված պատանիների անձնային գծերի, սթրեսակայունության, ինքնագնահատականի վրա ազդող գործոնների, հարմարման մեխանիզմների ուսումնասիրությունը: Ընդգծենք, որ ըստ «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 2022 թ. փետրվարի 9-ին ընդունված որոշման՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների շարքում են բացառիկ ընդունակություններ ունեցող անձը, որին հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ [11]: Հետևաբար, անհրաժեշտ է մեր երկրում բացառիկ ընդունակություններով մարդկանց մոտ առկա հոգեբանական դժվարությունների և դրանց մեխանիզմների հիմնարար հետազոտություն և գիտահեն առաջարկությունների ներկայացում:

Աշխատանքի նպատակն է բացահայտել ընդհանուր օժտվածություն ունեցող պատանիների հոգեկան առողջությունը պայմանավորող անձնային,

սոցիալ հոգեբանական գործոնների առանձնահատկությունները և փոխկապվածությունը սթրեսային իրավիճակով պայմանավորված հոգեֆիզիոլոգիական վիճակի փոփոխության հետ:

Հետազոտության օբյեկտը՝ ընդհանուր օժտվածություն ունեցող պատանիների տագնապայնությունը, անձնային գծերը, սոցիալ-հոգեբանական հարմարման մեխանիզմները և օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակը:

Հետազոտության առարկան՝ ընդհանուր օժտվածություն ունեցող աղջիկների և տղաների անձնային և իրավիճակային տագնապայնության, անձնային գծերի, սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկությունները, օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի գնահատումը սթրեսային պայմաններում և դրանց փոխպայմանավորվածությունը:

Հետազոտության վարկածը. Ընդհանուր օժտվածություն ունեցող պատանիների մոտ անձնային, իրավիճակային բարձր տագնապայնությունը, նեյրոտիզմը, սոցիալ-հոգեբանական ապահարմարումը և հուզական անհարմարավետությունը (դիսկոմֆորտ) հանդիսանում են հոգեկան առողջության ռիսկի գործոններ, որոնք արտահայտվում են հոգեֆիզիոլոգիական մակարդակում՝ փոխպայմանավորելով սթրեսային իրավիճակում օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի լարվածությունը:

Հետազոտության խնդիրներն են.

1. Իրականացնել տեսական վերլուծություն օժտվածության հիմնախնդրի պատմական ընթացքի, ներկայիս կարգավիճակի վերաբերյալ և առաջադրել ընդհանուր օժտվածության աշխատանքային մոդել, վերջինիս հիման վրա մշակել հոգեդիագնոստիկ մեթոդիկաներ:
2. Օժտված պատանիներին դուրս բերելու նպատակով իրականացնել հոգեդիագնոստիկ աշխատանքներ՝ օգտագործելով համապատասխան գործիքակազմ և սահմանել ընտրության նորմատիվները:
3. Ուսումնասիրել ընդհանուր օժտվածություն ունեցող պատանիների հոգեկան առողջությունը պայմանավորող և հոգեֆիոլոգիական վիճակի փոփոխության ռիսկային գործոնները, մշակել գնահատման մոդելներ և գործիքակազմ:
4. Գնահատել օժտված աղջիկների և տղաների անձնային գծերի, տագնապայնության, սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկությունները և վերլուծել առկա վիճակագրական փոխկապվածությունները:
5. Հոգեֆիզիոլոգիական կարգավիճակի ուսումնասիրման համար մշակել գիտափորձի մեթոդոլոգիական հիմքերն ու գործիքները: Գիտափորձի միջոցով որոշել սթրեսային իրավիճակով պայմանավորված օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի լարվածության մակարդակը և դիտման մեթոդով արձանագրել վարքային և հուզական դրսևորումները:
6. Իրականացնել ստացված արդյունքների վիճակագրական վերլուծություն՝ կիրառելով սրտային ռիթմի փոփոխականության վերլուծության հիստոգրաֆիկ և սպեկտրային վերլուծության մեթոդները:

7. Համադրել հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական բաղադրիչների ստացված արդյունքները՝ վերլուծելով գործոնների միջև առկա վիճակագրական օրինաչափությունները:
8. Հիմնավորելով օժտված պատանիների հոգեբանական աջակցության անհրաժեշտությունը՝ ներկայացնել թերապևտիկ, խորհրդատվական, հոգեշտկողական, զարգացնող, հոգեդիագնոստիկ, լուսավորչական միջամտությունների առաջարկներ:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքը.

Օժտվածության հիմնախնդրի ուսումնասիրության հիմքում ընկած են դիֆերենցիալ հոգեբանության, ընդունակությունների, ինտելեկտի, ստեղծարարության, անձի տեսությունների, տարիքային հոգեբանության, խորհրդային և արտասահմանյան հեղինակների ֆունդամենտալ տեսությունները՝ ի դեմս Ֆ. Գալտոնի, Չ. Սպիրմենի, Հ. Այզենկի, Հ. Գարդների, Լ. Տերստոունի, Լ. Տերմենի, Ջ.Գիլֆորդի, Պ. Թորենսի, Ռ. Կետտելի, Ռ. Ստերնբերգի, Ջ. Ռենզուլիի, Կ. Յունգի, Ա. Մասլոուի, Կ. Ռոջերսի և այլոց: Ընդհանուր օժտվածության հոգեդիագնոստիկ մոդելը առաջադրվել է Ջ. Ռենզուլիի, Ա. Տաննենբաումի, Ռ. Ստերնբերգի, Ջ. Ֆ. Ֆելդհասենի, Ֆ. Հանյեի և Հ. Գարդների՝ օժտվածության բազմաչափ մոդելների և ընդհանուր օժտվածության՝ Բ.Մ. Տեպլովի, Լ.Ս. Վիգոտսկու, Վ.Ն. Դրուժինինի, Ս.Լ. Ռուբինշտեյնի, Ա. Մ. Մատյուշկինի, Բ.Գ. Անանյեվի, Ե. Շեբլանովայի և այլոց մոտեցումների հիման վրա: Հետազոտության տեսական հիմք է հանդիսացել հոգեկան առողջության ուսումնասիրման անհատական-հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական մակարդակների՝ Բ. Ս. Բրատուսի հայեցակարգը: Օժտված անհատականությունների ռիսկի խումբ տարանջատելու պատկերացումները հիմնվում են ՌԴ համառուսական և Կոլումբյան հայեցակարգերի՝ աննորդաշնակ անձնային զարգացման, Կ. Դաբրովսկու՝ օժտված երեխաների և երիտասարդների կոնստիտուցիոնալ գերզգայականության և գերգրգռվողականության, Ռ. Կարպինսկու գերուղեղ/գերմարմին կապի քրոնիկ սթրեսային հակազդումների, ինչպես նաև Կ.Գ. Յունգի՝ օժտված անհատների հոգեկան զարգացման անհամաչափության, միակողմանիության, ներքին հակասականության և անձնային բացառիկության հայացքների վրա: Սթրեսի հոգեֆիզիոլոգիական մեխանիզմների հիմքում ընկած են Հ. Սելյեի «ընդհանուր ադապտացիոն համախտանիշ»-ի դրույթները, իսկ օժտված պատանիների հոգեբանական կարգավիճակի գնահատման մեթոդական հիմք է հանդիսացել սրտի ռիթմի փոփոխականության ուսումնասիրության Ռ.Մ. Բաևսկու մոտեցումը:

Հետազոտության համակազմ և իրականացման ընթացակարգը.

Հետազոտությունն անցկացվել է 2 փուլով՝ 1-ին փուլում իրականացվել են հոգեդիագնոստիկ աշխատանքներ, որի նպատակն էր նույնականացնել օժտված մասնակիցներին՝ ըստ ինտելեկտի, ստեղծարարության և ճանաչողական մոտիվացիայի ինտեգրալ բնութագրիչների: 2-րդ փուլում իրականացվել են օժտված նույնականացված պատանիների հոգեբանական և

հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների և դրանց փոխկապվածության ուսումնասիրություններ: Ըստ այդմ՝ առանձնացրել ենք սոցիալ-հոգեբանական հարմարումը, տագնապայնությունը, անձնային գծերը, որպես անհատական-հոգեբանական մակարդակի հոգեկան առողջությունը պայմանավորող չափորոշիչներ, իսկ սթրեսակայունությունը, որպես հոգեֆիզիոլոգիական մակարդակի հոգեկան առողջությունը պայմանավորող չափորոշիչ:
Հոգեդիագնոստիկ աշխատանքների համար ներառվել են «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրը, «Քվանտ» վարժարանը, Կարեն Դեմիրճյանի անվան √139 ավագ դպրոցը, Բենիամին Ժամկոչյանի անվան √119 ավագ դպրոցը: Այսպիսով, 1-ին փուլում հետազոտվել են 16-18 տարեկան ավագ դպրոցի 500 պատանիներ: 500 մասնակիցներից ինտելեկտի, ստեղծարարության և ճանաչողական մոտիվացիայի բոլոր երեք թեստերից բարձր արդյունքներ գրանցել են միայն 35 պատանիներ, որոնք նույնականացվել են որպես օժտվածներ: IQ կտրվածքը եղել է 130-144 միավոր, ինչը, ըստ նորմալ բաշխման կամ ինտելեկտուալ օժտվածության մակարդակների, համապատասխանում է *օժտվածություն* սանդղակին (+2-2.99 ս.շ. կամ 1:40-1:1,000): Ստուգիչ խմբում ներառվել են այն մասնակիցները, որոնք, ըստ վերոնշյալ թեստերի, բոլոր երեք չափանիշներով ունեցել են միջին սանդղակին համապատասխանող արդյունքներ: Հետազոտության 2-րդ փուլում մասնակցել են 70 հոգի՝ 35 օժտված և ստուգիչ խմբի 35 տիպիկ/նորմալ զարգացող կամ միջին արդյունքներ ունեցող պատանիներ: Հոգեդիագնոստիկ գործընթացում արձանագրվել են հետևյալ օրինաչափությունները՝ 500 մասնակիցներից 209-ը եղել են արական, 291-ը իգական սեռի ներկայացուցիչներ, գերակշռել են IQ-ի միջին (90-110)՝ 62%, ստեղծարարության ցածր՝ 59% և մոտիվացիայի միջին՝ 43% ցուցանիշները: Գրանցվել են IQ՝ Բարձր (130-144)-9%, միջինից բարձր (111-129)-19%, միջինից ցածր (90-50)-10% արդյունքներ, ստեղծարարության՝ բարձր-15%, միջին-26% և մոտիվացիայի՝ շատ բարձր-0.8%, բարձր-16%, նվազած-29% և ցածր-11.2% ցուցանիշներ: Որպես օժտվածներ նույնականացվել են հետազոտվողների ընդհանուր քանակի 7%-ը: Ինտելեկտի, ստեղծարարության և ճանաչողական մոտիվացիայի բոլոր երեք թեստերի միջին սանդղակին համապատասխան արդյունքներ գրանցել են հետազոտվողների ընդհանուր քանակի 12.2%-ը:

Հետազոտության մեթոդները և ընտրության հիմնավորումը.

Հետազոտության ընթացքում կիրառվել են հոգեդիագնոստիկ՝ անհատական և խմբային թեստավորման մեթոդը, և փորձարարական մեթոդներ՝ գիտափորձ, դիտման մեթոդ, էլեկտրասրտագրության (ԷՍԳ) մեթոդ, վարիացիոն անոթազարկաչափության Ռ.Բաևսկու մեթոդ, Ֆուրյեի արագ վերափոխման մաթեմատիկական մոդել: Թեստերի, մեթոդների, մեթոդիկաների և հարցարանների ընտրությունը հիմնավորված է աշխատանքի տեսամեթոդաբանական հիմքերով, գործիքների համարժեքությամբ (վալիդություն) և հուսալիությամբ, համապատասխան հետազոտության նպատակին, առարկային և խնդիրներին: Հոգեդիագնոստիկայի կամ

հետազոտության 1-ին փուլի համար կիրառվել են Ռ.Կետտելի «Մշակույթից անկախ» ինտելեկտի թեստը, Պ. Թորենսի «Ավարտիր նկարը» ստեղծագործական մտածողության գնահատման մեթոդիկան և ուսումնական մոտիվացիայի գնահատման հարցարանը, վերջինս մշակվել է հետ թարգմանության (Back-Translation) մեթոդով:
Հետազոտության 2-րդ փուլում հոգեկան առողջությունը պայմանավորող հոգեբանական գործոններն ուսումնասիրելու համար կիրառվել են անձնային և իրավիճակային տագնապայնության գնահատման մեթոդիկան (Չ.Դ. Սպիլբերգեր, Յու.Լ.Խանին), անձնային գծերի ուսումնասիրման «Մեծ հնգյակ» հարցարանը և սոցիալ- հոգեբանական հարմարման հարցարանը (Կ. Ռոջերս, Ռ.Դայմոնդ): Օժտված և ստուգիչ խմբերի միջև արժանահավատ տարբերությունները գնահատվել է համեմատական վերլուծության միջոցով, որի համար կիրառվել է SPSS 26 վիճակագրական փաթեթը: Երկու անկախ խմբերի տարբերության արժանահավատությունը որոշվել է ըստ Ստյուդենտի t չափորոշիչի, արդյունքները արժանահավատ են համարվել $p<0.05$*, $p<0.01$**, $p<0.001$*** մակարդակներում:
Հետազոտության 2-րդ փուլում հոգեկան առողջության հոգեֆիզիոլոգիական մակարդակի՝ սթրեսակայունության կամ սթրես ինդեքսի, ուսումնասիրման նպատակով կիրառվել են հոգեբանական գիտական փորձարարական մեթոդներ՝ գիտափորձը և դիտումը: Գիտափորձի ընթացքում լաբորատոր պայմաններում բոլոր 70 հետազոտվողներին՝ 35 օժտված և 35 ստուգիչ, առաջարկվել է լուծել 1 մաթեմատիկայի և 1 ֆիզիկայի առաջադրանք, որի համար հատկացվել է 10 րոպե ժամանակ: Առաջադրանքից առաջ և հետո գրանցվել է նրանց սրտի աշխատանքը, յուրաքանչյուրը 5 րոպե տևողությամբ, կիրառելով Էլեկտրասրտագրության մեթոդը (ԷՍԳ), ընթացքն արձանագրվել է դիտման մեթոդով:

Հետազոտական արդյունքների մշակումը և հուսալիությունը.

Հետազոտության հավաստիությունն ապահովված է հոգեբանական հիմնարար տեսական և մեթոդաբանական դրույթներով, մաթեմատիկական վիճակագրության՝ ռեգրեսիոն, կորելյացիոն, դիսպերսիոն մեթոդներով, սրտային ռիթմի փոփոխականության վերլուծության հիստոգրաֆիկ և սպեկտրային վերլուծության մեթոդներով՝ ՍՌՓ մաթեմատիկական վերլուծության Բաևսկու մեթոդով և Ֆուրյեի վերափոխման մաթեմատիկական մոդելի միջոցով՝ հաստատելով առաջադրված նպատակի, վարկածի, խնդիրների և պաշտպանության ենթակա դրույթների համապատասխանությունը: Որպես քանակական և գործիքային մեթոդներ օգտագործվել են թեստերը, ԷՍԳ-ն և գիտափորձը, որպես որակական մեթոդ՝ դիտումը: Արդյունքները վերլուծվել են քանակական և որակական մեթոդների համադրությամբ: *Գիտափորձն* իրականացվել է լաբորատոր, կառավարելի պայմաններում: Որպես ազդեցության պատճառ կիրառվել է առաջադրանքը՝ սահմանափակ ժամանակում լուծելու համար, իսկ պատճառահետևանքային կապն ուսումնասիրելու համար կիրառվել է էլեկտրասրտագրության (ԷՍԳ)

մեթոդը՝ արձանագրելու օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակը՝ սթրես ինդեքս, որպես հետևանք: Հետազոտության վարկածից ելնելով՝ որպես անկախ փոփոխական ընդունվել են մի կողմից անձնային առանձնահատկությունները, մյուս կողմից՝ սթրես ինդեքսը, հաստատելու հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական բաղադրիչների փոխպայմանավորվածությունը: Օժտված և ստուգիչ խմբի պատանիների կողմից առաջադրանքի ընկալումը դիտվում է որպես «ներքին» փոփոխական, որն անհրաժեշտ է բացատրել հետազոտության համատեքստում: *Դիտումն* իրականացվել է գիտական սկզբունքներին համապատասխան դիտման մոդելի հիման վրա, արդյունքներն արձանագրվել են դիտման քարտերում:

Պաշտպանության ներկայացվող դրույթներ.

1. Ընդհանուր օժտվածությունը ինտելեկտուալ, ստեղծագործական և մոտիվացիոն բաղադրիչների համակարգ է, ինչը հանդիսանում է օժտված պատանիների դուրսբերման հոգեդիագնոստիկ մոդել:
2. Օժտված պատանիներն ունեն անձնային, իրավիճակային բարձր տագնապայնություն, նեյրոտիզմ՝ արտահայտված հուզական անկայունության, ինքնաքննադատության, դեպրեսիվության, տագնապայնության անձնային գծերով, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական ապահարմարում և հուզական անհարմարավետություն, որոնք փոխպայմանավորված են:
3. Օժտված պատանիներին բնորոշ անձնային գծերի, անձնային և իրավիճակային տագնապայնության և սոցիալ-հոգեբանական մեխանիզմների միջև առկա են արժանահավատ կորելյացիոն կապեր, որոնք պայմանավորված են, մասնավորապես, նեյրոտիզմի ազդեցությամբ:
4. Գիտափորձը հաստատում է, որ թեստային իրավիճակն օժտված պատանիների օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի լարվածության՝ բարձր սթրես ինդեքսի, նախապայման է, ինչը ցածր սթրեսակայունության ցուցանիշ է և ուղեկցվում է հուզական լարվածությամբ և վարքային փոփոխություններով:
5. Օժտված պատանիներին բնորոշ նեյրոտիզմի, անձնային և իրավիճակային տագնապայնության, հուզական անհարմարավետության, ապահարմարման և սթրես ինդեքսի միջև առկա արժանահավատ կապերն ու փոխհարաբերությունները հաստատում են հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական բաղադրիչների փոխպայմանավորվածությունը և հանդիսանում հոգեկան առողջության ռիսկի գործոններ:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Մշակվել է հոգեկան առողջության ռիսկի գործոնների համակողմանի ուսումնասիրության մոդել, որը կազմված է անհատական-հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական մակարդակներից:
2. Միջգիտակարգային համալիր մոտեցման միջոցով ուսումնասիրվել է գիտության մեջ դեռևս լիարժեք չպարզաբանված հիմնահարցը, այն է՝

արտակարգ ընդունակությունների և հոգեկան առողջության կապը, հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական ռիսկի գործոնների փոխկապակցվածության համատեքստում:

3. Բացահայտվել է սթրեսի հոգեֆիզիոլոգիական մեխանիզմների և օժտվածության փոխկապակցվածությունը, օժտված պատանիների օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի լարվածության՝ սթրես ինդեքսի վերլուծությամբ:

Հետազոտության տեսական նշանակությունը.

Աշխատանքում ներկայացված տեսական դրույթները կրում են միջգիտակարգային բնույթ և արտացոլում են թեմային վերաբերող ֆունդամենտալ տեսություններն ու հետազոտական տվյալները: Կարևորում ենք օժտվածության գաղափարախոսության, պատմական զարգացման հոգեբանական ասպեկտների, հոգեդիագնոստիկ խնդիրների վերաբերյալ իրականացված տեսական խորքային և համակողմանի վերլուծությունները հետագա հետազոտությունների իրականացման համար, քանի որ օժտված պատանիների նույնականացման տեսամեթոդաբանությունը որոշիչ է արդյունքների գիտական հավաստիության տեսանկյունից: Օժտվածության վերաբերյալ նյարդահոգեկան առանձնահատկությունների, վարքային, հուզական, ուսուցման և շփման խնդիրների պատճառահետևանքային կապերի վերլուծությունները ընդլայնում և հարստացնում են օժտված պատանիների մասին առկա պատկերացումները և կարող են օգտակար լինել տարբեր դասընթացների, ուսումնական նյութերի, վերապատրաստումների մշակման համար: Սթրեսի հոգեֆիզիոլոգիական մեխանիզմների, հոգեբանական կարգավիճակի գնահատման մեթոդների, հոգեկան առողջության հոգեֆիզիոլոգիական մակարդակի ուսումնասիրության մանրամասն տեսական վերլուծությունները կարող են նեյրոհոգեբանության ուղղությամբ հետագա ուսումնասիրությունների հիմք հանդիսանալ:

Հետազոտության կիրառական նշանակությունը.

Օժտված պատանիների ընդունակությունների պահպանումն ու զարգացումը բխում է Հայաստանի Հանրապետության պետական շահերից: Ներկայացված արդյունքները թույլ են տալիս մշակել և մեր երկրում ներդնել օժտված երեխաների և երիտասարդների կրթության կազմակերպման և հոգեբանական աջակցության նպատակային ռազմավարական հայեցակարգ:

- Հանրակրթության շրջանակներում կիրառելի է ընդհանուր օժտվածության ներկայացված հոգեդիագնոստիկ մոդելը, որպես մասնավոր տեսակի բոլոր օժտվածությունների ընդհանուր հիմք:
- Հետազոտության արդյունքներն օգտակար կլինեն օժտված երիտասարդների հոգեբանական աջակցության ծրագրեր, դասընթացներ կազմելու հարցում՝ ինքնաճանաչման, ինքնակարգավորման հմտությունների, հուզական կայունության պահպանման, սթրեսի կանխարգելման և հաղթահարման արդյունավետ միջոցների յուրացման և

սեփական ընդունակությունների նկատմամբ պատասխանատվության ձևավորման նպատակով:

- Ուսուցիչների, կրթության հոգեբանների, ուսուցչի օգնականի, ինչպես նաև ադմինիստրատիվ աշխատակազմի վերապատրաստման համար օժտված պատանիների հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ արդյունքները, հետազոտության տեսամեթոդական մշակումները կարող են ուղեցույց հանդիսանալ քննական սթրեսներին, մրցույթներին, ուսուցման մեջ և միջանձնային հարաբերություններում նման սովորողների հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական արձագանքների ճշգրիտ գնահատման համար՝ լավագույնս կազմակերպելու նրանց ուսուցումը, հոգեբանական միջամտությունը, անհրաժեշտության դեպքում՝ ընդունակությունների և անձի զարգացման խթանումը:
- Հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս ծնողավարության շրջանակներում մշակել համապատասխան մոտեցումներ, ցուցումներ, աջակցման ծրագրեր և իրազեկման աշխատանքներ՝ օգնելու ծնողներին հասկանալ, բացատրել իրենց երեխաների վարքն ու անձնային առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում գտնել արդյունավետ շփման ձևեր, նպաստել ընդունակությունների պահպանմանն ու անձի ամբողջական և ներդաշնակ զարգացմանը:
- Որպես հիվանդության կամ խանգարման առաջացման ռիսկային խումբ, օժտված պատանիների հոգեբանական առողջությունը պայմանավորող և հոգեֆիզիոլոգիական վիճակի համապատասխան արդյունքները կարող են ինչպես բացատրել, այնպես էլ օգնել կանխատեսելու հոգեբանական առողջության խնդիրների հնարավոր սպեկտրը և ձեռնարկել կանխարգելիչ քայլեր:

Հետազոտության փորձարկումն ու ներդրումը.

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հոդվածներում, աբստրակտներում, հեղինակային գրքում: Ներկայացվել և քննարկվել են Սանկտ Պետերբուրգում, Բեռլինում, Կիևում, Էդինբուրգում (Մեծ Բրիտանիա), Թայպեյում (Թայվան), Նեշվիլում (ԱՄՆ), Վյուրցբուրգում (Գերմանիա), Վիեննայում, Ցյուրիխում, Միլանում՝ գիտաժողովների գիտական կոմիտեների կողմից արժանանալով 14 միջազգային դրամաշնորհների: 2024թ. Նեյրոհոգեֆարմակոլոգիայի համաեվրոպական կոնգրեսին ներկայացրած «Օժտված պատանիների հոգեկան առողջության ռիսկի գործոնները» աբստրակտը ճանաչվել է լավագույնը, արժանացել Նեյրոհոգեֆարմակոլոգիայի 2024 թվականի Համաեվրոպական կոնգրեսի գերազանցության մրցանակի և պարգևատրության (ECNP Excellence Award winner 2024): Աշխատանքը ներկայացվել է 17 միջազգային գիտաժողովներում, հետազոտության արդյունքները տպագրվել են 4.600 և 3.505 ազդեցության գործակից ունեցող միջազգային պարբերականներում՝ 8 տեղական և 15 միջազգային ժողովածուներում: Հետազոտության տեսամեթոդաբանության հիման վրա հրատարակվել է ձեռնարկ՝ («Օժտված

երեխաների հոգեբանական դիագնոստիկա» Printinfo, ISBN 978-9939-0-2303-8, Երևան, 160 էջ, 2017թ.), որը լույս է տեսել ՀՀ նախագահի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակներում՝ Երիտասարդ գիտնականների հեղինակած գրքերի տպագրության համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթին հաղթելու շնորհիվ: 2017թ.-ին Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ ձեռնարկը տրամադրվել է Երևանի շուրջ 75 դպրոցներին, իսկ ներկայումս ՀՀ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնում բացառիկ ընդունակություններով սովորողների ներառական կրթության նախագծի շրջանակներում գրքի տեսամեթոդաբանության հիման վրա մշակվում և իրականացվում են հոգեդիագնոստիկ աշխատանքներ: Թեմայի շուրջ խոսվել է Բուն TV հեռուստաընկերության՝ «Օժտված երեխաների ներառումն ուսումնական գործընթացում համընդհանուր ներառական կրթության համատեքստում» խորագրով «Բուն զրույց կրթության շուրջ» հաղորդաշարում, «Օժտվածության հիմնախնդիրը և ներկայիս կարգավիճակը» թեմայով «Գլոբալ Բրիջ» կրթահամալիրի ուսուցչական անձնակազմի սեմինար-վերապատրաստման շրջանակներում և այլն:

Աշխատանքի կառուցվածք

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, 5 գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկներից, գրականության ցանկից (212 գիտական աղբյուր) և 6 հավելվածից: Աշխատանքում ներառված են 13 աղյուսակ, 19 նկար, 12 հիստոգրամ և 3 գծապատկեր: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 180 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **առաջին գլուխը՝** «Օժտվածության հիմնախնդրի պատմական զարգացումը, կոգնիտիվ հիմնադրույթները» խորագրով, կազմված է երեք ենթագլուխներից, որտեղ անդրադարձ է կատարվել պատմական զարգացման ընթացքում օժտվածության փիլիսոփայական և հոգեբանական ասպեկտներին: Ներկայացվել է օժտվածության առանցքային բաղադրիչների՝ ինտելեկտի, ստեղծարարության և անձնային գծերի, ներառման պատմական զարգացումը՝ համալրված Ֆ. Գալտոնի, Լ. Տերմենի, Մ. Վոլլախի և Ն. Կոգանի հիմնարար հետազոտության արդյունքներով: **1.1 ենթագլխում՝** «Օժտվածությունը որպես ինտելեկտ», ներկայացված է ինտելեկտի բարձր մակարդակի և օժտվածության նույնացման պատմական ընթացքը: Մանրամասն անդրադարձել ենք ինտելեկտի դասական և ժամանակակից տեսություններին և սույն հետազոտության հիմք ընդունել Չ. Սպիրմենի առաջադրած՝ ինտելեկտի ընդհանուր գործոնը («G ֆակտոր») և Ռ. Կետտելի համապատասխան գործիքակազմի տեսամեթոդաբանությունը, որը ներկայումս հիմնավորվում է գիտական նոր տվյալներով: Սակայն, ինտելեկտի բարձր մակարդակը դեռևս չի ապահովում ստեղծագործական բացառիկ ձեռքբերումներ և օժտվածության հասկացությունը հարստանում է նոր որակներով, որոնցից առանցքայինը ստեղծարարությունն է: **1.2 ենթագլխում՝** «Օժտվածությունը որպես ստեղծարարություն», ներկայացված են ստեղծարարության մեխանիզմները, անձնային գծերի և մոտիվացիայի հետ կապը: Սույն աշխատանքի հիմքում ընկած են Ջ. Գիլֆորդի՝ սահունության, ճկունության, օրիգինալության և ճշգրտության, չափանիշները և Պ. Թորենսի՝ «ինտելեկտուալ շեմ»-ի, հայեցակարգը: Վերլուծվել է ստեղծարարության և ինտելեկտի տարբեր հարաբերակցությունները և վարքային դրսևորումները: Հետազոտական արդյունքներով հաստատվել է միջավայրի վճռորոշ նշանակությունը, ինչպես նաև նվաճման մոտիվացիայի, մրցակցության, սոցիալական խրախուսման մոտիվացիայի արգելակող ազդեցությունը ստեղծարարության վրա: **1.3 ենթագլխում՝** «Օժտվածության հիմնախնդիրը անձի տեսությունների ներքո», ներկայացված են ինքնաիրականացված մարդկանց անձնային առանձնահատկությունները տարբեր տեսությունների ներքո: Ատենախոսության ելակետային դրույթներում արտացոլվում են Կ.Գ. Յունգի հայացքները օժտված երեխաների զարգացման անհամաչափության, ներքին հակասականության, միակողմանիության վերաբերյալ: Պարզաբանվել են, որ օժտվածներին բնորոշ ինքնաիրականացման մոտիվացիայի բարձր մակարդակը, ինչպես նաև պերֆեկցիոնիզմը, եսակենտրոնությունը և անհաջողությունները հաղթահարելու դժվարությունները կարող են խոչընդոտել ինքնազարգացմանը: **Երկրորդ գլուխը՝** «Օժտվածությունը որպես համակարգ, հոգեբանական առողջության ռիսկերը», կազմված է երեք ենթագլուխներից, որտեղ հիմնարար վերլուծվել են համակարգային և բազմաչափ մոդելները, օժտված մարդկանց նյարդահոգեկան մեխանիզմները և հոգեկան զարգացման

անհամաչափությունները: **2.1 ենթագլխում՝** «Օժտվածության հիմնախնդրի համակարգային և բազմաչափ մոդելներ», նկարագրվում են աշխատանքի հիմքում ընկած ընդհանուր օժտվածության՝ Բ.Մ. Տեպլովի, Վ.Ն. Դրուժինինի, Ս.Լ. Ռուբինշտեյնի, Ա. Մ. Մատյուշկինի և այլոց հայացքները: Ներկայացված են Ջ. Ռենզուլիի, Ա. Տաննենբաումի, Ռ. Ստերնբերգի և այլոց բազմաչափ մոդելները և առաջադրվել է ընդհանուր օժտվածության հոգեդիագնոստիկ մոդելը: Հատկանշական է, որ օժտվածությունն ինքնին չի ապահովում հաջողություն և կարիք ունի պահպանման և զարգացման, քանի որ սոցիալական արժեքի, միկրո և մակրոմիջավայրերի ազդեցությունը, արդյունավետությունը, հասարակության կարիքները, բյուրեղացնող և զտող փորձը ևս օժտվածության կայացման բաղադրիչներ են: **2.2 ենթագլխում՝** «Վարքային, հուզական, ուսուցման և շփման խնդիրների դետերմինացիա», նկարագրված են օժտված երեխաների և երիտասարդների աններդաշնակ զարգացման դրսևորումները, ճանաչողական մոտիվացիայի չձևավորվածության (ճանաչողական մոտիվացիան դառնում է միակը, ինչի հետևանքով արգելակվում է հուզականային ոլորտի զարգացումը), պերֆեկցիոնիզմի, հուզական անկայունության («աֆեկտի ու ինտելեկտի» միասնության) և օնտոգենետիկ զարգացման խանգարումների մեխանիզմները: **2.3 ենթագլխում՝** «Օժտվածության նյարդահոգեկան առանձնահատկություններ», հիմնարար անդրադարձ է կատարվել օժտվածության նյարդահոգեկան մեխանիզմների հետազոտություններին: Կ. Դաբրովսկին (n=80) հաստատել է օժտված երեխաների և երիտասարդների հոգեշարժողական, զգայական, աֆֆեկտիվ, երևակայական և ինտելեկտուալ գերգրգռվողականությունը, կոնստիտուցիոնալ գերզգայականությունը: 2018թ. Ռ. Կարպինսկին (n=3715) գերուղեղ/գերմարմին կապի քրոնիկ սթրեսային հակազդումների միջոցով բացատրում է օժտված մարդկանց հոգեկան ոլորտի խանգարումները: Ներկայացվել է DSM-V-ում ուսուցման հատուկ դժվարություններ ունեցող ինտելեկտուալ օժտվածներ նույնականացված անհատների բնութագիրը: **Երրորդ գլուխը՝** «Հոգեկան առողջություն և սթրեսի զարգացման մեխանիզմները», կազմված է երեք ենթագլուխներից և վերաբերում է հոգեկան առողջության հիմնական հայեցակարգերին, սթրեսի հոգեֆիզիոլոգիական մեխանիզմներին և սրտի աշխատանքի կարգավորման սկզբունքներին ու վերլուծության մեթոդներին: **3.1 ենթագլխում՝** «Հոգեկան առողջութուն», նկարագրված են հոգեկան առողջության հիմնական սահմանումները և մանրամասն անդրադարձ է կատարված ատենախոսության հիմքում ընկած Բ. Ս. Բրատուսի հոգեկան առողջության հայեցակարգին, ըստ որի, հոգեկան առողջությունն ուսումնասիրվում է անձնային-իմաստային, անհատական-հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական մակարդակներում: **3.2 ենթագլխում՝** «Սթրեսի հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները, Էլեկտրասրտագրություն (ԷՍԳ)», հիմնարար անդրադարձ է կատարվել Հ. Սելյեի «ընդհանուր ադապտացիոն համախտանիշ»-ի դրույթներին, կարգավորման հիպոթալամուս-հիպոֆիզ-մակերիկամային (ՀՀՄ) և ինքնավար նյարդային համակարգի (ԻՆՀ)

ուղիներին, սթրեսի ախտածին ազդեցությանը օրգան համակարգերի վրա: Ցույց է տրված, որ սթրեսն ու հույզերն անխզելիորեն կապված են և արտացոլվում են «հոգեհուզական սթրես» հասկացության միջոցով, որը կախված է սթրեսային գործոնի անհատական նշանակալիությունից: Մանրամասն նկարագրված է սույն հետազոտության շրջանակներում կիրառված, հոգեֆիզիոլոգիան ժամանակակից մեծ արդյունավետություն ունեցող չափումներից՝ սրտի ռիթմի փոփոխականությունը (ՍՌՓ), որը հնարավորություն է տալիս հետազոտելու մարդու հոգեբանական կարգավիճակը և իրականացվում է էլեկտրասրտագրության (ԷՍԳ) մեթոդով: **3.3 ենթագլխում՝** «Սրտի աշխատանքի կարգավորման սկզբունքները: Սթրեսային վիճակների հետազոտությունը ՍՌՓ մաթեմատիկական վերլուծության մեթոդներով» խորագրով, հիմնարար ներկայացված է սրտի աշխատանքի կարգավորման կենտրոնական և ծայրամասային բաժինների աշխատանքը, սիմպաթիկ և պարասիմպաթիկ նյարդային համակարգերի գործառույթները, հիմնական հատկանիշները և սրտի ռիթմի կարգավորման վրա ազդեցությունը: Սրտի ռիթմի վերլուծության մեթոդներից անդրադարձել ենք վիճակագրական և սպեկտրային վերլուծության, կորելյացիոն ռիթմոգրամների, երկրաչափական մեթոդներին, մանրամասն ներկայացրել սույն հետազտության մեջ կիրառված վարիացիոն անոթազարկաչափության Ռ.Մ. Բաևսկու մեթոդը: **Չորրորդ գլխում՝** «Հետազոտության կազմակերպում, համակազմ, մեթոդ և մեթոդիկաների ընտրություն» խորագրով, բաղկացած է երեք ենթագլուխներից և ներկայացված են աշխատանքի մեթոդական մոտեցումները և համապատասխան մեթոդիկաները, համակազմը, հետազոտության կազմակերպումն ու ընթացքը: **4.1 ենթագլխում՝** «Օժտված պատանիների հոգեդիագնոստիկա» խորագրով, ներկայացված է ընդհանուր օժտվածության մեր կողմից առաջադրված սահմանումը, օժտված պատանիների հոգեդիագնոստիկայի մոդելը և համապատասխան մեթոդիկաները: **4.2 ենթագլխում՝** «Հոգեբանական առանձնահատկությունների գնահատման մեթոդաբանություն և մեթոդիկաներ», սահմանել ենք ռիսկի գործոն հասկացությունը, կիրառել հոգեկան առողջության գնահատման Բ. Ս. Բրատուսի մոտեցումը և առաջադրել հոգեկան առողջության ռիսկի գնահատման չափորոշիչները: **4.3 ենթագլխում՝** «Հոգեֆիզիոլոգիական կարգավիճակի գնահատման ընթացակարգ և մեթոդներ», նկարագրել ենք հոգեկան առողջության հոգեֆիզիոլոգիական մակարդակի՝ սթրեսակայունության (SI) ուսումնասիրման մեթոդները: Այդ նպատակով կիրառվել են գիտափորձի, դիտման, Էլեկտրասրտագրության (ԷՍԳ) և ՍՌՓ վերլուծության Բաևսկու մեթոդները: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի Ինտեգրատիվ կենսաբանության լաբորատորիայում, դպրոցներում՝ համապատասխան պայմաններում: Հետազոտության համար օգտագործվել է մեկ խցիկանի շարժական կարդիոգրաֆ: **Հինգերորդ գլխում՝** «Օժտված պատանիների հոգեբանական առանձնահատկությունների և օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի

վերլուծություն», ներկայացված են հոգեկան առողջությունը պայմանավորող հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական բաղադրիչների և դրանց փոխպայմանավորվածության փորձարարական տվյալները: **5.1 ենթագլխում՝** «Օժտված պատանիների անձնային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններ», ներկայացված են գիտափորձի ընթացքում կիրառված դիտման արդյունքները, համակողմանի վերլուծվել են օժտված պատանիների անձնային գծերի, իրավիճակային և անձնային տագնապայնության և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, ինչպես նաև գենդերային տարբերությունները: *Անձի հոգեբանական կերպարի դուրսբերման համար կիրառված «Մեծ հնգյակ» հարցարանի արդյունքները ներկայացված են գծապատկեր 1-ում:* Օժտված պատանիներն բնորոշ է *նոր փպավորություններից խուսափումը (8.2/.012*), անկարեկցություն անձնային գիծը՝ (7.5/.001***)*: Առկա են արժանահավատ տարբերություններ *անբարեխղճության (48.9/.010**) և իմպուլսիվության (8.1/.013*)* սանդղակներով: Օժտված պատանիները նշանակալի տարբերություններ ունեն *նեյրոտիզմի (60.4/.001***)* և դրա ենթագործոններ՝ *տագնապության (12.0/.001***), ինքնաքննադատության (12.1/.003**) և հուզական անկայունության (13.1/.002**)* սանդղակներում: Նրանց բնորոշ են նաև *իրատեսականությունը (11.5 /.021*) և անզգայունությունը (9.8 /.006**):*



Գծապատկեր 1. Հետազոտական եվ ստուգիչ խմբերի պատանիների անձնային գծերի արժանահավատ տարբերությունների միջին արժեքներ

Օժտված պատանիների ռեակտիվ և անձնային տագնապայնության արդյունքները ներկայացված են գծապատկեր 2-ում: Արդյունքները ցույց են տալիս օժտված աղջիկների և տղաների *ռեակտիվ (55.89/.000***) և անձնային (57.34/.001***) տագնապայնության* մակարդակների արժանահատավատ տարբերությունները ստուգիչ խմբերի համեմատությամբ:



Գծապատկեր 2. Հետազոտական և ստուգիչ խմբերի պատանիների անձնային և ռեակտիվ տագնապայնության արժանահավատ տարբերությունների միջին արժեքներ

Գծապատկեր 3-ում ներկայացված են սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկությունները: Ըստ արդյունքների՝ օժտված պատանիները արժանահավատորեն տարբերվում են *ապահարմարում* (54.6/.049*), *հուզական անհարմարավետություն* (40.6/.000***), *ինտերնալություն* (73.2/.002**) և *գերիշխում* (67.8/.01**) հատկանիշներով:



Գծապատկեր 3. Հետազոտական և ստուգիչ խմբերի պատանիների սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկությունների արժանահավատ տարբերությունների միջին արժեքներ

Գիտափորձի ընթացքում կիրառված դիտման արդյունքների վերլուծություն: Օժտված աղջիկներն ու տղաներն առաջադրանքը լուծելու ժամանակ ցուցաբերում են մոտիվացիայի շատ բարձր մակարդակ, համառություն, մրցակցություն, ակտիվորեն կիրառում են պաշտպանական մեխանիզմներ՝ արժեզրկումներ, արդարացումներ, ռացիոնալիզացիաներ, ունենում տրամադրության փոփոխություններ, հուզական լարվածություն: Օժտված պատանիների այս վարքը բացատրելի է պարտվել, անհաջողությունները հաղթահարել չկարողանալու դժվարություններով, իրենցից բարձր սպասելիքներով, եսակենտրոնությամբ: **5.2 ենթագլխում՝** «ՍՌՓ հիստոգրաֆիկ և սպեկտրային մեթոդով ստացված ցուցանիշների վերլուծություն»,

ներկայացված են գիտափորձի ընթացքում հոգեբանական կարգավիճակի ուսումնասիրման համար կիրառված ԷՍԳ ցուցանիշների՝ ՍՌՓ վերլուծության հիստոգրաֆիկ և սպեկտրային վերլուծության արդյունքները: ՍՌՓ հիստոգրաֆիկ 12 հիմնական ցուցանիշներից ներկայացնում ենք սթրես ինդեքսի արժեքները:



Հապավումների մեկնաբանություն.
Օա1, Օա2– օժտված աղջիկներ (Օա), թեստից առաջ (1) և հետո (2)
Սա1, Սա2– ստուգիչ խմբի աղջիկներ (Սա), թեստից առաջ (1) և հետո (2)
Օտ1, Օտ2– օժտված տղաներ (Օտ), թեստից առաջ (1) և հետո (2)
Ստ1, Ստ2– ստուգիչ խմբի տղաներ (Ստ), թեստից առաջ (1) և հետո (2)

Հիստոգրամ 10. Օժտված և ստուգիչ խմբի աղջիկների և տղաների RR ինտերվալների լարվածության ցուցիչի կամ սթրես ինդեքսի (SI) հիստոգրամ

Հիստոգրամ 10-ում ներկայացված են սթրես ինդեքսի (SI) արժեքները: Արդյունքները վկայում են, որ օժտված պատանիների մոտ, ի տարբերություն ստուգիչ խմբերի, կենտրոնական մեխանիզմների ակտիվությունը գերակայում է ինքնավար մեխանիզմների նկատմամբ, արդյունքում առկա է կոմպենսացիոն դիսթրես 120-250 արժեքային տիրույթում:

ՍՌՓ սպեկտրային վերլուծություն և գենդերային տարբերություններ: Նկար 14-ում ներկայացված են օժտված աղջիկների և տղաների սպեկտրային վերլուծության գենդերային տարբերությունները:



Նկար 14. Օժտված աղջիկների (Օա) և տղաների (Օտ) կարդիոգրամի RR ինտերվալների սպեկտրիալ բաշխումը առաջադրանքից առաջ և հետո

Թեստային առաջադրանքից առաջ և հետո աղջիկների մոտ առկա է սթրեսային ավելի բարձր լարվածություն՝ ի տարբերություն տղաների: Չնայած դրան, հատկապես առաջադրանքից հետո, տղաների ցուցանիշները կտրուկ փոխվում են՝ ցույց տալով ձախողման նշանակալիությունը նրանց համար:

5.3 ենթագլխում՝ «Հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական գործոնների համեմատական վերլուծություն», ներկայացվել է հետազոտվող խմբերում հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական բաղադրիչների փոխպայմանավորվածության ուսումնասիրությունը՝ կորելյացիոն և ռեգրեսիոն մեթոդների վերլուծությամբ: Նախքան այդ, աղյուսակ 12-ում ներկայացված են օժտված աղջիկներին և տղաներին բնորոշ գծերի կորելյացիոն վերլուծության արդյունքները՝ բացահայտելու նեյրոտիզմի կապը մյուս գծերի դրսևորման հարցում: Համաձայն աղյուսակի՝ առկա են չափավոր, միջին և ուժեղ կորելյացիոն կապեր նեյրոտիզմի և օժտված պատանիների մոտ դրսևորվող անձնային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների միջև:

Աղյուսակ 12. Օժտված պատանիների առանձնահատկությունների՝ անձնային գծերի, տագնապայնության և սոցիալ-հոգեբանական հարմարման կորելյացիոն վերլուծություն (Պիրսոնի գործակից)

		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	ՈՏ															
2	ԱՏ	.46**														
3	Նեյրոտիզմ	-0.28	0.12													
4	Տագնապայնություն	-0.32	-0.06	.83**												
5	Դեպրեսիվություն	0.04	.36*	.65**	.40*											
6	Ինքնագնահատություն	-0.21	0.11	.77**	.64**	.40*										
7	Հուզական անկայունություն	-0.32	0.03	.79**	.57**	.46**	.41*									
8	Հարմարում	0.02	-0.03	-0.12	-0.19	0.21	-.52**	0.17								
9	Հուզական հարմարվողություն	0.19	-0.09	-.62**	-.62**	-0.31	-.87**	-0.20	.70**							
10	Կարեկցանք	.41*	.54**	-0.27	-0.32	-0.10	-.45**	-0.16	0.23	.39*						
11	Բարեխղճություն	-.34*	0.05	0.09	0.10	-0.19	-0.05	0.05	0.05	0.09	0.23					
12	Կոնֆլիկտություն	-.36*	-0.13	0.02	0.13	-.36*	0.13	0.03	-0.12	-0.10	-0.20	.47**				
13	Երևակայություն	-0.11	0.23	0.08	-0.01	-0.24	-0.01	0.13	0.00	-0.02	.41*	.38*	.34*			
14	Հուզականություն	0.12	.44**	-0.11	-0.20	0.14	-0.06	-0.15	0.05	-0.04	0.16	0.05	0.24	0.12		
15	Ուղեղնայություն	-.56**	-.70**	0.13	0.15	-0.12	-0.15	0.33	0.30	0.17	-0.27	0.17	0.30	0.04	-0.30	
16	Գերիշխում	-.55**	-.49**	-0.05	0.01	-0.14	-0.14	0.13	0.18	0.19	-.37*	0.07	0.23	-0.28	-0.12	.56**

**. Correlation is significant at the 0.01 level (2-tailed).

*. Correlation is significant at the 0.05 level (2-tailed).

Հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական բաղադրիչների համեմատական վերլուծություն: Իրականացված կորելյացիոն վերլուծության արդյունքները ցույց են տալիս (տես՝ աղյուսակ 13), որ օժտված պատանիների մոտ բարձր արժանահավատության կորելյացիոն կապեր են դրսևորվում նեյրոտիզմի, անձնային տագնապայնություն և սթրես ինդեքսի միջև:

Աղյուսակ 13. Հետազոտվող խմբերում հոգեբանական ցուցանիշների և սթրես ինդեքսի կորելյացիոն վերլուծություն

Ցուցանիշներ / Խմբեր	Սթրես Ինդեքս (SI)			
	Օժտվածներ N=35	**P**	**Ստուգիչ** N=35	**P**
Նեյրոտիզմ	0.5	**	0.15	-
Ռեակտիվ տագնապայնություն	0.41	*	0.31	-
Անձնային տագնապայնություն	0.54	**	0.12	-
Հուզական հարմարավետություն	-0.35	*	-0.18	-
Սոցիալական հարմարում	-0.14	-	-0.2	-

Առկա են արժանահավատ կապեր ռեակտիվ տագնապայնության և սթրես ինդեքսի միջև: Արժանահավատ բացասական կապեր են գրանցվել հուզական հարմարավետության և սթրես ինդեքսի միջև, այսինքն որքան բարձր է սթրես ինդեքսը, այնքան բարձր է հուզական անհարմարավետությունը: Սոցիալական հարմարման և սթրես ինդեքսի միջև կորելյացիոն կապեր չեն բացահայտվել, ինչը ամենայն հավանականության պայմանավորված է հարմարման գործընթացում վեգետատիվ կարգավորման օղակների ոչ ակտիվ ներգրավվածությամբ: Ուսումնասիրվող հատկանշների կորելյացիայի գործակիցների արժեքները հաստատվում են ռեգրեսիոն վերլուծության արդյունքներով: Հետազոտության վարկածից ելնելով՝ որպես անկախ փոփոխական ընդունվել են մի կողմից անձնային առանձնահատկությունները, մյուս կողմից՝ սթրես ինդեքսը, հաստատելու հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական բաղադրիչների փոխպայմանավորվածությունը:

Տեսական և փորձարարական հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծությունը, դրանց ընդհանրացումը և մեկնաբանումը հնարավորություն տվեց հանգելու հետևյալ եզրակացությունների.

Ընդհանուր տեսական եզրակացություններ.

1. Ընդհանուր օժտվածությունը ինտելեկտուալ, ստեղծագործական և մոտիվացիոն բաղադրիչների ամբողջություն է, ինչը ընդհանուր օժտվածություն ունեցող պատանիների գնահատման հոգեդիագնոստիկ մոդել է: Ընդհանուր օժտվածությունը սահմանվում է որպես մասնավոր տեսակի բոլոր օժտվածությունների ընդհանուր հիմք, որպես բարձր ստեղծագործական պոտենցիալ՝ ամբողջական և եզակի բնութագրիչ, որը ձևավորվում է ճանաչողական և մոտիվացիոն որակների փոխհարաբերությունից:
2. Օժտված պատանիների օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի գնահատման համար կիրառված սրտի ռիթմի մաթեմատիկական վերլուծության Ռ.Մ. Բաևսկու մեթոդը համադրելի է հոգեբանական հետազոտությունների հետ և

մարդու հոգեբանական կարգավիճակի համալիր ուսումնասիրության արդյունավետ միջոց է:

Հոգեբանական բաղադրիչի փորձարարական եզրակացություններ.

3. Հետազոտության արդյունքներով հաստատվել են օժտված պատանիների հոգեկան առողջությունը պայմանավորող անձնային առանձնահատկությունների, մասնավորապես՝ անձնային և իրավիճակային բարձր տագնապայնության, նեյրոտիզմի՝ տագնապայնության, ինքնաքննադատության և հուզական անկայունության դրսևորումներ, ինչպես նաև անկարեկցության, նոր տպավորություններից խուսափման, իրատեսականության և անզգայունության, անբարեխղճության՝ իմպուլսիվություն, անձնային գծեր, նույն տարիքի տիպիկ զարգացում ունեցող մյուս պատանիների համեմատությամբ:
4. Օժտված աղջիկների արտահայտված նեյրոտիզմը՝ տագնապայնության, դեպրեսիվության, ինքնաքննադատության, հուզական անկայունության դրսևորումներով, անբարեխղճությունը՝ թափթփվածության և իմպուլսիվության դրսևորումներով, ինչպես նաև՝ նոր տպավորություններից խուսափումը, անկարեկցությունը, իրատեսականությունը, անզգայունությունը համադրելի է օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի սպեկտրային վերլուծության ցուցանիշների՝ աղջիկների սիրտանոթային համակարգի առավել ցածր հարմարողական ռեսուրսների և սթրեսային բարձր լարվածության հետ:
5. Ըստ սոցիալ-հոգեբանական հարմարման մեխանիզմների՝ օժտված պատանիներն ունեն ապահարմարման և հուզական անհարմարավետության, ինտերնալության և գերիշխման հատկանիշներ, ընդ որում, աղջիկներին բնորոշ է միայն հուզական անհարմարավետությունը: Գերիշխման և ինտերնալության արդյունքները բացատրվում է օժտված պատանիներին բնորոշ ներքին ուժեղ մոտիվացիայով, եսակենտրոնությամբ, բացառիկության և մեծամտության հատկանիշներով:
6. Օժտված պատանիներին բնորոշ նեյրոտիզմը կապված է իրավիճակային և անձնային տագնապայնության, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական կարգավիճակի փոփոխության հետ՝ պայմանավորելով ապահարմարումը և հուզական անբարեկեցությունը: Հատկանշական է, որ գերիշխումն ու ինտերնալությունն ունեն դրական կորելյացիա միմյանց և բացասական կորելյացիա անձնային և ռեակտիվ տագնապայնության հետ: Նման հակասականությունը բնորոշ լինելով օժտված պատանիներին, բացատրում է նաև ներքին կոնֆլիկտների առաջացման հիմքերը: Գերիշխման և կարեկցանքի բացասական կապը ոչ միայն օրինաչափ է, այլև բացատրում է միջանձնային հարաբերություններում նրանց դժվարությունները: Որքան բարձր է օժտված պատանիների իրավիճակային տագնապն ու դեպրեսիվությունը, այնքան վարքն անբարեխիղճ է և թափթփված, իսկ

կարեկցանքի համեմատաբար ցածր աստիճանին նպաստում է ինքնաքննադատության բարձր մակարդակը:

7. Ստուգիչի խմբի պատանիներին բնորոշ է անձնային գծերի, տագնապայնության և սոցիալ-հոգեբանական հարմարման հետևյալ հատկանիշները՝ նոր տպավորությունների որոնում, կարեկցանք, բարեխղճություն, ինքնակառավարում, կոկիկություն, հուզական հավասարակշռություն, անհոգություն, ինքնաբավություն, հուզական հարմարավետություն, հուզական կայունություն, երևակայություն, հուզականություն, հուզական հարմարավետություն, հարմարում, ինչպես նաև տագնապայնության, ինտերնալության ու գերիշխման արժանահատավորեն ցածր ցուցանիշներ:

Հոգեֆիզիոլոգիական բաղադրիչի փորձարարական եզրակացություններ.

8. Համաձայն գիտափորձի՝ թեստային իրավիճակն օժտված պատանիների մոտ առաջացնում է օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի լարվածություն՝ բարձր սթրես ինդեքս, որը բարձր է տարիքային և ֆիզիոլոգիական նորմայից և ցածր սթրեսակայունության ցուցանիշ է: Ըստ սպեկտրիալ վերլուծության՝ առաջադրանքի ձախողման նշանակալիությունը բարձր է տղաների դեպքում, որն արտացոլվում է սրտի ռիթմի արժանահավատ փոփոխություններով:

9. Օժտված պատանիների համար թեստային իրավիճակն առաջացնում է սթրեսային հակազդում՝ կախված իրավիճակի անհատական, իմաստային նշանակալիությունից, այսինքն, նրանց հոգեհուզական կարգավիճակը շեղվում է հոգեբանական բնույթ ունեցող սթրեսային գործոնի ազդեցության արդյունքում և պայմանավորում օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի լարվածությունն՝ ի տարբերություն ստուգիչ խմբի: Գիտափորձի համատեքստում որպես «ներքին» փոփոխական հանդես է գալիս ինքնագնահատականին և ինքնահարգանքին սպառնալիքը, թեստային իրավիճակը օժտված պատանիների կողմից անձնավորվում է, ընկալվում որպես իրենց ընդունակությունների գնահատում, քանի որ օժտված անձն «ինքն իրեն ճանաչում է իր արդյունքի» միջոցով:

10. Գիտափորձի արդյունքում կիրառված դիտումը ցույց տվեց, որ օժտված աղջիկներն ու տղաներն առաջադրանքը լուծելու ժամանակ ցուցաբերում են մոտիվացիայի շատ բարձր մակարդակ, համառություն, մրցակցություն, ակտիվորեն կիրառում են պաշտպանական մեխանիզմներ՝ արժեզրկումներ, ռացիոնալիզացիաներ, արդարացումներ, ունենում տրամադրության փոփոխություններ, հուզական լարվածություն: Օժտված պատանիների այս վարքը բացատրելի է պարտվել, անհաջողությունները հաղթահարել չկարողանալու դժվարություններով, իրենցից բարձր սպասելիքներով, եսակենտրոնությամբ:

Հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական բաղադրիչների համեմատական եզրակացություններ.

11. Համեմատական վերլուծությամբ պարզվել է, որ օժտված պատանիների մոտ առկա է փոխպայմանավորվածություն հոգեբանական և վեգետատիվ գործընթացների կարգավորման համակարգերի միջև, այսինքն թեստային առաջադրանքների կատարման ընթացքում ծագած անհամաչափ լարվածությունը փոխպայմանավորված է անձնային առանձնահատկություններով և դրսևորվում է նրանց հոգեբանական կարգավիճակում:
12. Անձնային և իրավիճակային բարձր տագնապայնությունը, նեյրոտիզմը, հուզական անհարմարավետությունն արտահայտվում են օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի լարվածությամբ՝ բարձր սթրես ինդեքսով: Սոցիալական ապահարմարման և սրտային ռիթմի կարգավորման միջև փոխկապվածություն չկա, ինչը բացատրվում է հարմարման գործընթացում վեգետատիվ կարգավորման օղակների ոչ ակտիվ ներգրավվածությամբ: Ստուգիչ խմբի հետազոտվողների մոտ արժանահավատ առնչությունների բացակայությունը վկայում է, որ նրանց մոտ առաջադրանքների կատարումը չի հանգեցրել սրտային ռիթմի կարգավորիչ համակարգերի լարվածության առաջացման և հոգեբանական կարգավիճակի փոփոխության:

Գործնական առաջարկություններ

Սույն հետազոտության շրջանակներում բացահայտված հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները հաստատում են, որ օժտվածությունը, որպես մարդու ակտուալ և պոտենցիալ ընդունակությունների բարձր մակարդակ, պահպանման և զարգացման կարիք ունի: Անհրաժեշտ է օժտվածությունն ուղեկցող տարբեր հոգեբանական ռիսկերի կանխարգելումն ու կառավարումը՝ անձի առողջ զարգացման և ընդունակությունների լիարժեք դրսևորման համար: Հետևաբար, առաջարկում ենք ներքոնշյալ միջամտությունների իրականացումը:

1. Օժտված պատանիների ինտելեկտուալ պահանջմունքներին համապատասխան կրթության առանձնահատուկ պայմաններ ստեղծելիս անհրաժեշտ է կարևորել անձի ամբողջական, համակողմանի և համաչափ հոգեբանական զարգացման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով ինտելեկտուալ-հուզական և սոցիալական անհամաչափությունները:
2. Օժտված երեխաների հետ աշխատանքում արդյունավետ է նպատակադրման, արժեքային կողմնորոշիչների, միջավայրի ընկալման փոփոխության, ինքնարդյունավետության և ինքնակարգավորման ուղղությամբ ինտերվենցիան, որն ապահովում է հոգեբանական բարեկեցություն և ակադեմիական աճ:

3. Օժտված պատանիների անհատական պրոֆիլների ստեղծում՝ գործադրած ջանքերի ու հաջողությունների աճի փաստաթղթավորումը արդյունավետ միջոց է ընդունակությունների և գնահատականների վերաբերյալ վերաբերմունքի փոփոխության համար:
4. Հաշվի առնելով ժամանակային սահմանափակումների, թեստային իրավիճակների ազդեցությունը, անհրաժեշտ է ուսուցիչների մեթոդական մոտեցումների վերանայում և փոփոխություն:
5. Անհրաժեշտ են սթրեսի և տագնապների հաղթահարման արդյունավետ միջոցների, ռելաքսացիոն տեխնիկաների, շփման և հարմարման հմտությունների յուրացմանն ուղղված խմբային և անհատական հոգեբանական աշխատանքներ:
6. Օժտված մարդկանց մասին բիբլիոթերապիայի, կինոթերապիայի, կենսագրությունների խմբային քննարկումները օգտակար կլինեն այս տարիքային խմբի հուզական, միջանձնային, ներանձնային դժվարությունների հաղթահարման համար:
7. Հաշվի առնելով ընդունակությունների արագ զարգացումն ու հուզական կարգավորման դժվարությունները՝ մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հոգեբանական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել ավելի վաղ հասակում:
8. Կրթության կազմակերպումն ու հոգեբանական աջակցությունը ենթադրում է ծնողների, ուսուցիչների, մեթոդիստների, կլինիկական հոգեբանների, նեյրոհոգեբաների, կրթության հոգեբանների և ադմինիստրացիայի համագործակցություն՝ ծնողավարական, լուսավորչական, մեթոդական և ռեսուրսների ստեղծման աշխատանքների իրականացման շրջանակներում:

Վերոնշյալ քայլերը հնարավորություն կտան օժտված երեխաների և պատանիների հետ աշխատանքում ձևավորել ինքնաճանաչման և ինքնակարգավորման հմտություններ, ադեկվատ «Ես» պատկեր, գործունեության արդյունքների տարանջատում անձից՝ անձնական և ակադեմիական «Ես» պատկերների առանձնացում, ինքնագնահատականի կարգավորում, ներքին հակասականությունների գիտակցում, ուժեղ և թույլ կողմերի իմացություն, սեփական ընդունակությունների նկատմամբ իրատեսական պատկերացումներ և պատասխանատվության ձևավորում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված հետևյալ հոդվածներում, գրքում և աբստրակտներում:

1. Առաքելյան Մ.Ա., «Օժտված երեխաների կրթության օժանդակումը «Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարան» կրթահամալիրի օրինակով (ընդհանուր ակնարկ)», Մանկավարժաման Միտք հանդես Երևան, Տաթև գիտակրթական համալիր, ՋԱՆԳԱԿ հրատարակչություն, 2013, N 3-4, էջ 31-35 (230)
2. Аракелян М.А., «Комплексный Подход Выявления Одаренных Детей» Нейронаука для медицины и психологии: 12-й Международный междисциплинарный конгресс. Труды Конгресса / Под ред. Лосевой Е.В., Крючковой А.В., Логиновой Н.А. –М.: МАКС Пресс, 2016. 494с. ISBN 978-5-317-05267-6, Июнь 1-11, Судак, Крым, Россия, 2016, ст. 66-67 (494)
3. Arakelyan M.A., «Relationship between Intelligence and Creativity» International Society for Intelligence Research (ISIR), Saint Petersburg, Russia, 17th Annual Conference Materials, July 15–17, 2016, p. (62) 104
4. Առաքելյան Մ.Ա., «Օժտված երեխաների հոգեբանական դիագնոստիկա» Երևան, Printinfo, ISBN 978-9939-0-2303-8, 2017, 160 էջ, (10 տպագրական մամուլ, 300 օրինակ)
5. Arakelyan M.A., «Stress overcoming specifications of gifted children» WPA XVII World Congress of Psychiatry, «Psychiatry of the 21th Century: Context, Controversies and commitment», 08-12 October, 2017, Berlin, Germany, p. 124
6. Առաքելյան Մ.Ա., «Տագնապայնության դրսևորումը օժտված պատանիների մոտ» Արդի հոգեբանություն. «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» VI միջազգային գիտաժողովի նյութեր, ISSN 2579-2504, EDIT PRINT, Երևան, 2017, էջ 14-19 (713)
7. Առաքելյան Մ.Ա., «Տնտեսական գործընթացներում օժտված պատանիների սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկությունները» «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, ISSN (print): 1829-2828, Երևան, 2018, N 1, էջ 276-282 (444)
8. Առաքելյան Մ.Ա., «Օժտված պատանիներին բնորոշ անձնային առանձնահատկությունների դրսևորումը հուզական կայունությունից անկայունություն բևեռականության մեջ» «ԱԿՈՒՆՔ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2018թ. N 1 (18), էջ 261-266 (356)
9. Arakelyan M.A., «Gender differences of gifted adolescents in the context of personal traits and psychosocial adaptation» 19th Annual meeting of ISIR: Edinburgh, United Kingdom, 13-15 July, 2018, p.8 (16)
10. Arakelyan M.A., «Stress overcoming specifications of gifted children» Вестник Российско-Армянского Университета гуманитарные и общественные науки, Ереван, ISSN 1829-0450, (28), Издательство РАУ, N 1/2018, ст.129-140 (180)

11. Առաքելյան Մ.Ա., «Օժտված պատանիների գենդերային առանձնահատկությունները անձնային գծերի և սոցիալ-հոգեբանական հարմարման համատեքստում» ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, «ԼՐԱԲԵՐ» հասարակական գիտությունների» ISSN 0320-8117, N 2(653), 2018, էջ 325-333 (378)
12. Մ. Առաքելյան, Վ. Գրիգորյան, «Օժտված պատանիների անձնային առանձնահատկությունները» Արդի հոգեբանություն գիտական հանդես, Երևան, ISSN 2579-2504, N 2, 2018, էջ 10-18 (148)
13. Arakelyan M.A., «Psychosocial adjustment and anxiety of gifted adolescents» Biennial Conference of the International Research Association for Talent Development and Excellence (IRATDE), Program Book and Proceedings of the 2019 Biennial Conference of the IRATDE, 12–16 April 2019, Published by National Taiwan Normal University (NTNU), ISBN 978-986-05-8876-7 (平裝) pp. 237-241 (454)
14. Arakelyan M.A., «Assessment of functional state of the gifted adolescents' organism under the psychological stress» 23rd Biennial World Conference of World Council for Gifted and Talented Children (WCGTC), "A World of Possibilities: Gifts, Talents, & Potential", Nashville, Tennessee, USA, July 24–28, 2019, p.46, (103),
15. Arakelyan M.A., «Psychological risk factors of gifted adolescents» Journal of Neural Transmission, Springer Nature, ISSN: 0300-9564; Volume 126, Issue 11, November, 2019; doi.org/10.1007/s00702-019-02095-9, Impact Factor - 3.505 Abstracts of the WASAD Congress 2019: an International Congress of the World Association for stress related and anxiety disorders in collaboration with the Collaborative Research Center SFB-TRR 58, Fear, Anxiety, Anxiety Disorders, held on 3–5 October 2019 in Würzburg, Germany. pages 1519–1576, (2019), pp 16 (142)
16. Arakelyan M.A., «Neurotic personal characteristics of gifted adolescents» European Neuropsychopharmacology (ECNP), ISSN: 0924-977X; Volume 40, Supplement 1, November 2020, doi.org/10.1016/j.euroneuro.2020.09.088, Impact Factor – 4.600, p. S65
17. Sargsyan R.SH.[1], Arakelyan M.A.[2], Kostanyan A.L.[1], Simonyan L.G.[1]«New approaches to the assessment of psychophysiological state in gifted adolescents» Journal Psychology. Psychophysiology ISSN: 2686-7281, eISSN: 2686-729X, Volume 14, issue 1, DOI: 10.14529/jpps210111, 2021, Impact Factor-0,411, p. 111-118
18. Arakelyan M.A., «Gender differences of gifted adolescents»2021 Virtual World Conference, «Developing the Future of Gifted Education», July 31 - August 1 & August 7 – 8, p.49 (99)
19. Arakelyan M.A., «Psycho-physiological stress response of gifted adolescents» 21st WPA World Congress of Psychiatry, Virtual, Theme: New World, New Challenges for Psychiatry & Mental Health, 18-21 October 2021

20. Arakelyan M.A., «Gender differences in personality traits of gifted adolescents» Proceedings of the 17th Asia-Pacific Conference on Giftedness: Published by Department of Special Education, National Taiwan Normal University, Under the Auspices of Ministry of Education, Republic of China (Taiwan), October 2022, p.34-39 (270), ISBN (PDF) 978-626-7053-03-4
21. Arakelyan M.A., «What is the cost of defeat for gifted adolescents? » 22nd Annual ISIR Conference Proceedings: Vienna, July 25–27, 2022, p. 56 (86)
22. Arakelyan M.A., «Mental Health Risks Among Gifted Adolescents» 2024 Annual ISIR Conference materials, International Society for Intelligence Research (ISIR), Zürich, Switzerland, July 28–31, 2024, p. 12 (91)
23. Arakelyan M.A., «Mental health risks among gifted adolescents» Neuroscience Applied, Volume 3, Supplement 2, p. 213, 2024, ISSN 2772-4085, Abstracts of the 37th ECNP Congress 2024, 104505 https://doi.org/10.1016/j.nsa.2024.104505

МАДЛЕНА АРАКЕЛЯН АГАСАРОВНА
ОДАРЕННОСТЬ КАК ФАКТОР РИСКА ПСИХИЧЕСКОГО ЗДОРОВЬЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.04. -"Клиническая, специальная психология".
Защита диссертации состоится 25 апреля 2025г., в 16.00 на заседании специализированного совета по психологии 067 ВАК по присуждению ученых степеней при Ереванском Государственном Университете, по адресу: ул. Абовяна 52а, Ереван 0025, Армения.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: Одарённые люди подвержены повышенному риску психических расстройств, таких как тревожность, депрессия, СДВГ, ОКР, расстройства аутистического спектра и другие. Это обусловливает необходимость комплексного изучения взаимосвязи одарённости и психического здоровья с учётом как психологических, так и психофизиологических факторов. Следует отметить, что в соответствии с поправками и дополнениями к Закону РА «Об общем образовании» от 9 февраля 2022 года среди обучающихся, нуждающихся в особых условиях, выделяются лица с исключительными способностями. Это подчёркивает значимость фундаментального исследования психологических трудностей одарённых детей и молодёжи, а также разработки научно обоснованных рекомендаций по их преодолению.

Цель исследования: Выявить психологические, социально-психологические и психофизиологические факторы, влияющие на психическое здоровье одарённых юношей и девушек, а также изучить их взаимосвязь с изменениями функционального состояния организма в стрессовых условиях.

Гипотеза: Высокая тревожность, нейротизм, эмоциональный дискомфорт и дезадаптация являются факторами риска психического здоровья одарённых юношей и девушек, которые выражаются на психофизиологическом уровне, обуславливая напряженность функционального состояния организма в стрессовой ситуации.

Задачи исследования:

1. Предложить рабочую модель общей одарённости, на основе которой разработать психодиагностические методики.
2. Оценить личностные черты, уровень тревожности и особенности социально-психологической адаптации одарённых девушек и юношей.
3. В рамках эксперимента определить уровень напряжённости функционального состояния организма в стрессовой ситуации, а также зафиксировать поведенческие и эмоциональные проявления методом наблюдения.
4. Сопоставить результаты психологического и психофизиологического исследований, выявив статистически значимые закономерности между изучаемыми факторами.

Научная новизна: **1.** Сформирована комплексная модель исследования факторов риска психического здоровья, состоящая из индивидуально-психологического и психофизиологического уровней. **2.** С использованием междисциплинарного комплексного подхода исследована ранее недостаточно изученная взаимосвязь: с одной стороны, между одарённостью и психическим здоровьем, с другой — между психологическими и психофизиологическими параметрами. **3.** Выявлена взаимосвязь между психофизиологическими механизмами стресса и одарённостью на основе анализа стресс-индекса, который отражает уровень напряжённости функционального состояния организма одарённых юношей и девушек.

Теоретическая значимость исследования. Представленные в работе теоретические положения носят междисциплинарный характер и охватывают ключевые аспекты одарённости, вопросы психодиагностики и нейропсихические особенности одаренных людей.

Практическая значимость исследования. Сохранение и развитие способностей одарённых юношей и девушек является стратегическим приоритетом Республики Армения. Полученные результаты могут быть использованы для разработки и внедрения эффективных программ образования и психологической поддержки одарённых детей и молодёжи. Исследование также будет полезно при подготовке психологов, педагогов и родителей, обеспечивая им необходимые знания для создания благоприятных условий развития одарённых юношей и девушек.

Достоверность результатов. Достоверность исследования обеспечена фундаментальными теоретическими и методологическими положениями психологии, а также применением математико-статистических методов, включая регрессионный, корреляционный и дисперсионный анализ. В исследовании использованы методы анализа вариабельности сердечного ритма (гистографический и спектральный анализ) по методу Р.М. Баевского и преобразование Фурье, что подтверждает соответствие цели, гипотезы, задач и основных положений исследования.

Реализация: Результаты были представлены на 17 международных конференциях, обсуждены в более чем 10 странах, удостоены 14 международных грантов и наград, а также опубликованы в журналах с высоким импакт-фактором. Методология внедрена в работу Республиканского психолого-педагогического центра. Также опубликовано практическое руководство «Психологическая диагностика одарённых детей», распространённое в образовательных учреждениях. Апробация диссертации проведена на кафедре социальной и клинической психологии ЕГУ.

Структура работы. Диссертация состоит из введения, пяти глав, выводов, практических рекомендаций, списка литературы (212 научных источников) и шести приложений. Общий объём диссертации составляет 180 страниц и включает 13 таблиц, 19 рисунков, 12 гистограмм и 3 графика.

По теме диссертации опубликованы 23 статей и тезисов.

ARAKELYAN MADLENA AGHASAR
GIFTEDNESS AS A RISK FACTOR FOR MENTAL HEALTH

Thesis for the degree of Candidate of Psychological Sciences in the specialty 19.00.04. - «Clinical, special psychology»
The defense of the dissertation will be held on April 25, 2025, at 16:00 at the session of the Specialized Council 067 in Psychology of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia at Yerevan State University. Address: Yerevan 0025, st. Abovyan 52a.

SUMMARY

The relevance of the issue. Gifted individuals are often prone to mental disorders (such as anxiety, depression, ADHD, OCD, and autism spectrum disorders), which necessitates a comprehensive approach to studying the relationship between giftedness and mental health, including psychological and psychophysiological factors. It is important to note that, according to the amendments and additions to the Law of the Republic of Armenia "On General Education," adopted on February 9, 2022, individuals with exceptional abilities are identified among students requiring special learning conditions. This highlights the significance of conducting a fundamental study of the psychological difficulties faced by gifted children and youth, as well as developing scientifically grounded recommendations for overcoming these challenges.

Research Objective. To identify psychological, psychosocial, and psychophysiological factors affecting the mental health of gifted adolescents and study their relationship with changes in the functional state of the body under stress conditions.

Hypothesis. High anxiety, neuroticism, emotional discomfort, and maladaptation are risk factors for the mental health of gifted adolescents. These factors manifest at the psychophysiological level, leading to increased tension in the functional state of the body under stress.

Main Goals.

1. Propose a working model of general giftedness as a basis for developing psychodiagnostic methodologies.
2. Assess personality traits, anxiety levels, and psychosocial adaptation characteristics of gifted boys and girls.
3. Determine the level of tension in the body's functional state in a stressful situation through experimental methods and record behavioral and emotional manifestations using the observation method.
4. Compare the results of psychological and psychophysiological studies to identify statistically significant correlations between the factors.

Scientific Novelty.

1. A comprehensive model for studying mental health risk factors has been developed, incorporating both individual-psychological and psychophysiological levels. 2. Using an interdisciplinary comprehensive approach, a previously

insufficiently studied relationship has been explored: on the one hand, between giftedness and mental health, and on the other, between psychological and psychophysiological parameters. 3. The correlation between psychophysiological stress mechanisms and giftedness has been identified through the analysis of the stress index, which reflects the level of tension in the functional state of the body in gifted adolescents.

Theoretical Significance. The theoretical concepts presented in this study are interdisciplinary in nature, covering key aspects of giftedness, psychodiagnostic issues, and neuropsychological characteristics of gifted individuals.

Practical Significance. The preservation and development of the abilities of gifted boys and girls is a strategic priority for the Republic of Armenia. The findings of this study can be used to develop and implement effective educational programs and psychological support systems for gifted children and youth. The study will also be useful in training psychologists, educators, administrators, and parents, equipping them with the necessary knowledge to create favorable conditions for the development of gifted adolescents.

Data Reliability. The reliability of the study is ensured by fundamental theoretical and methodological principles of psychology, as well as by the use of mathematical-statistical methods, including regression, correlation, and variance analysis. The study employs heart rate variability analysis methods (histographic and spectral analysis) based on R.M. Baevsky's method and Fourier transformation, confirming the alignment of the study's goals, hypotheses, tasks, and key findings.

Approbation and Adoption of the Research Results. The results have been presented at 17 international conferences, discussed in more than 10 countries, received 14 international grants and awards, and have been published in high-impact journals. The methodology has been integrated into the work of the Republican Psychological-Pedagogical Center. Additionally, a practical guidebook titled "Psychological Diagnostics of Gifted Children" has been published and distributed to educational institutions. The thesis was approved at the Department of Social and Clinical Psychology at Yerevan State University.

Work Structure. The thesis consists of an introduction, five chapters, conclusions, practical recommendations, a bibliography (including 212 scientific sources), and six appendices. The total volume of the thesis is 180 pages and includes 13 tables, 19 figures, 12 histograms, and 3 graphs.

A total of 23 articles and abstracts have been published on the subject of the thesis.